ծուխիւն։ Յայտնի բան է՝ սրանց երկրագործական գործիքներն ու անասնապահութեան եղանակը հնադարեան և նահապետական ձևով էր, ինչպէս իրենց Հայ ցեղակիցների մէջ։ Իսկ ուսման, դիտութեան, նորանոր արհեստների կատարելութեան կողմից, նրանք Հայերից էլ աւելի սուղ վիճակի մէջ են։ Թրքացած գիւղացի կանայք հագնում են տեղական պարսկական տարազով, բայց անծանօթ տղամարդ տեսնելիս, փախչում ու թագնւում են, ճիշտ տեղական Հայ կանանց պէս։ Այն ինչ՝ տեղացի դուտ պարսկական կամ լեռնական մահմեդական կանայք, անծանօթի հետ բաց երեսով ասում, խօսում և զրուցում են արձակ ու համարձակ։ Ամբողջ աշխարհին քաջ յայտնի է, որ մահմեդականները առհասարակ կրօնամոլ, բարբարոս և արիւնարբու թշնամի են բոլոր քրիստոնեաների հետ։ Բայց զարմանալին այն է, որ Ուտիացոց աշխարհի բուն պարսիկներն ու լեռնցի մահմեդականները այն աստիճան անհաշտ և սխերիմ թշնամի չեն քրիստոնեաների հետ, որչափ որ Հայից դարձած թուրքերը։ Մահմէդի հարազատ զաւակները ուտում խմում են Հայ քրիստոնեաների կերակուրները և նրանց հետ շփումն ու յարաբերութիւն ունենալը պղծ (հարամ) չեն համարում։ Այն ինչ Հայից դարձած մահմեդականները վերջին ծայր մոլեռանդ (ֆանաթիկ), կատարեալ բարբարոս և արիւնարբու թշնամի են իրենց արիւնակից և ցեղակից նախկին Հայ քրիստոնեայ եղբարց հետ։ Մահմեդականների բնածին յատկութիւննե-